

«Հ Հ ֆինանսների նախարարություն»

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 36/6

15 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Մուրմիրս» ՍՊԸ 19.08.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ Հրազդանի ՏՀՏ 31.07.2015 թ-ի թիվ 6111864 ակտի դեմ:

«Մուրմիրս» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Ս.թ. հուլիսի 16-ին ՀԴՄ կիրառման ճշտության ստուգման նպատակով Հրազդանի ՏՀՏ աշխատակիցների կողմից արտադրամասից գնվել է 1600 դրամ արժողությամբ 30 շիշ լիմոնադ: Վաճառողը գումարն ընդունելուց հետո մուտքագրել է այն ՀԴՄ և տպել կտրոնը, սակայն չի տրամադրել գնորդներին՝ նրանց հեռանալու պատճառով: Քիչ անց վերադառնալով, գնորդները ներկայացել են որպես հարկային տեսուչներ և բացատրություն պահանջել կտրոնի չտրամադրման համար: Վաճառողը պարզաբանել է, որ ինքը մուտքագրել է նշված գումարը և տպել կտրոնը, որը չի հանձնել գնորդների արդեն հեռացած լինելու պատճառով: Այնուհետև տեսուչները ներկայացրել են ՀԴՄ կիրառման ճշտության ստուգման նպատակով բացված հանձնարարականը և կազմել արձանագրություն: Միաժամանակ տեսուչները հայտնել են, որ արտադրամասից վաճառք իրականացնելու համար ՀԴՄ-ը կիրառումը ընդհանրապես պարտադիր չէ և նույնիսկ անթույլատրելի՝ պատճառաբանելով, որ դրա համար պետք է ստեղծված լինի առանձնացված վաճառատեղ իր առանձին մուտքով: Սակայն չի նշվել, թե որ իրավական ակտերով է կարգավորվում այդ հանգամանքը:

Մի քանի օր անց Հրազդանի տեսչությունում ընկերության տնօրենին են ներկայացրել ՀՀ կառավարության 1 օգոստոսի 2013 թ-ի 846-Ն որոշման թիվ 2 հավելվածով սահմանված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման» 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, ըստ որի գանձապահը պարտավոր է ապրանքները հանձնելու պահին գնորդից կամ մատուցված ծառայությունների դիմաց պատվիրատուից գումար ստանալու դեպքում, իսկ կանխավճարների դեպքում գումարը մուտքագրելուց անմիջապես հետո, տրամադրել ՀԴՄ կտրոն: Նշված պահանջները չկատարելը նույն հոդվածի 40-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթների համաձայն դիտվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում: Տնօրենի հարցին, թե ի վերջո ընկերությունը իրավունք ունի կամ պարտավոր է արդյոք ունենալ և շահագործել ՀԴՄ արտադրամասում, որևէ ստույգ պատասխան չի տրվել:

Հուլիսի 22-ին հանձնվել է թիվ 6111864 Ակտի նախագիծը, որը կազմվել վերոնշյալ որոշման դրույթների հիման վրա: Ուսումնասիրելով տվյալ ոլորտի օրենսդրությունը և մասնավորապես, որպես ակտի կազմման հիմք հանդիսացած վերոնշյալ որոշումը պարզվել է, որ տվյալ որոշման նույն հավելվածի հաջորդ՝ 41-րդ կետի 1-ին ենթակետի դրույթների համաձայն օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով ՀԴՄ-ների շահագործման կանոնների խախտում չեն համարվում գնորդի կողմից ՀԴՄ-ի կտրոնը չվերցնելու արդյունքում դրա փաստացի չհանձնումը գնորդին, եթե ՀԴՄ-ի կտրոնը փաստացի տպագրվել է, և դրանում նշված գումարը ներառվել է ֆինկալ հասույթում: Հղում կատարելով այս դրույթին, ինչն անշեղորեն կատարվել է վաճառողի կողմից և արձանագրված է ստուգման ժամանակ կազմված արձանագրությունում, ընկերության կողմից ակտի նախագծի վերաբերյալ հուլիսի 29-ին Հրազդանի ՏՀՏ է ներկայացվել առարկություն:

Հուլիսի 31-ին հանձնվել է վերջնական ակտը, որը ունեցել է նախագծի րովանդակությունը և չի պարունակել որևէ կարծիք կամ պարզաբանում ներկայացված

առարկության և ՀԴՄ շահագործման պարտավորության/իրավունքի վերաբերյալ հարցման մասին:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է սույն գործը քննության առնել գանգատարկման հանձնաժողովում, ինչպես նաև պարզաբանել, թե արտադրամասից արտադրանքի վաճառք իրականացնելիս արդյոք ՀԴՄ-ի կիրառումը պարտադիր է և ինչ իրավական ակտով է կարգավորվում ՀԴՄ-ի կիրառությանը վերաբերվող հարաբերությունները:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Հրազդանի ՏՀՏ պետի 06.07.2015 թ-ի թիվ 6111864 հանձնարարագրի համաձայն «Մուրմիրս» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Հրազդանի ՏՀՏ 31.07.2015 թ-ի թիվ 6111864 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ՀՀ ՖՆ Հրազդանի ՏՀՏ գլխավոր հարկային տեսուչներ Կարեն Եղյանի և Մհեր Աբրահամյանի կողմից 16.07.2015թ.–ին ժամը 17:37-ին ք.Չարենցավան, 5-րդ թաղամասի 5շ. բացվածք հասցեում գործունեություն իրականացնող «Մուրմիրս» ՍՊԸ-ին պատկանող զովացուցիչ ըմպելիքների արտադրամասից կանխիկ եղանակով կատարվել է ընդհանուր գումարով 1600 դրամի գնում՝ (30 հատ շալցված լիմոնադ 0.33լ տարողությամբ), որի դիմաց վճարվել է 1600 դրամ: Բանվոր-վաճառողուհի Նարինե Սերգոյանի կողմից ՀԴՄ-ն շահագործվել է, սակայն ստուգող անձանց չի տրամադրվել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն: Ստուգում իրականացնող հարկային ծառայողները «Մուրմիրս» ՍՊԸ-ի տնօրենին են ներկայացրել ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այսուհետև ժամը 17:43-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն, որի տվյալով հասույթի գումարը կազմել է 1600 դրամ: Ստուգումն իրականացնող անձանց կողմից հանված «Z» հաշվետվության կտրոնը և բանվոր-վաճառողուհի Նարինե Սերգոյանի կողմից շահագործված ՀԴՄ-ի կտրոնը, որը չի տրամադրվել ստուգող անձանց, գտնվել են նույն ժապավենի վրա:

Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 2013թ.–ի օգոստոսի 1-ի թիվ 846-Ն որոշման հավելված 2-ով սահմանված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման» կարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որը նույն հավելվածի 40-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն դիտվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման խախտում: Նշված խախտման համար Ակտով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Քննարկվող դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից 16.07.2015թ.–ին ժամը 17:37-ին «Մուրմիրս» ՍՊԸ-ին պատկանող զովացուցիչ ըմպելիքների արտադրամասից գնված 30 շիշ լիմոնադի դիմաց վճարված 1600 դրամն ընկերության վաճառողուհու կողմից մուտքագրվել է ՀԴՄ, սակայն գնորդին չի տրամադրվել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն: Նշված հանգամանքն ընդունեցին նաև նիստին ներկա գտնվող ընկերության ներկայացուցիչները:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2013 թ-ի օգոստոսի 1-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգ»-ի (այսուհետ նաև Կարգ) 23-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն. «Գանձապահը պարտավոր է՝

2) ապրանքները հանձնելու պահին՝ գնորդից կամ մատուցված ծառայությունների դիմաց՝ պատվիրատուից գումար ստանալու դեպքում, իսկ կանխավճարների դեպքում՝ գումարը մուտքագրելուց անմիջապես հետո տրամադրել ՀԴՄ կտրոն»:

Կարգի 40-րդ կետի համաձայն. «Օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում է դիտվում՝

...

2) ՀԴՄ-ի կտրոնի չտրամադրումը, այդ թվում՝ ստացված կանխավճարի դիմաց.»:

Վերոգրյալից հետևում է, որ տվյալ դեպքում ընկերության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 2013 թ-ի օգոստոսի 1-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգ»-ի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետով սահմանված պատասխանատվության միջոցը:

Գանգատում մատնանշված Կարգի 41-րդ կետի 1-ին ենթակետի վերաբերյալ, որի համաձայն օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ ՀԴՄ-ների շահագործման կանոնների խախտում չեն համարվում գնորդի կողմից ՀԴՄ-ի կտրոնը չվերցնելու արդյունքում դրա փաստացի չհանձնումը գնորդին, եթե ՀԴՄ-ի կտրոնը փաստացի տպագրվել է, և դրանում նշված գումարը ներառվել է ֆինկալ հասույթում, հարկ է նշել, որ նշված դրույքը քննարկվող դեպքում կիրառելի չէ, քանի որ վաճառողուհու կողմից ՀԴՄ-ի կտրոն չտրամադրվելու դեպքում գնորդի կողմից ՀԴՄ-ի կտրոնը չվերցնելու պայմանը պարզապես չի կարող գործել:

Ինչ վերաբերվում է գանգատում նշված հարցադրմանը, թե օրենսդրական որ նորմերով են կարգավորված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման հետ կապված դրույթները, ապա այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Հրազդանի ՏՀՏ 31.07.2015 թ-ի թիվ 6111864 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ